Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի դիտարկումներն ու առաջարկները «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 439-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

Սույն թվականի հունիսի 25-ին ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ ԿԳՄՄՆ) կողմից Իրավական ակտերի նախագծերի հրապարկման միասնական կաքում (https://www.e-draft.am/) ներկայացվել է ՀՀ Հանրակրթության պետական չափորոշչի փոփոխության նախագիծ (այսուհետ՝ Նախագիծ)։ Սույն փաստաթղթով ներկայացվում է Նախագծի շուրջ Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի(ԲՀՀՀ) փորձագիտական խմբի դիտարկումներն ու առաջարկները։

1. Կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում

Նախագծի հիմքում ներկայացված է Կոպետենցիաների վրա հիմնված ուսուցման մոտեցումը՝ արտահայատված Առանցքային կոմպետենցիաների (կարողունակությունների), ինչպես նաև դրանց հավանական փոխկապակցված վերջնարդյունքների հետ։ Ուսումնասիրելով Նախագծով ներկայացված կարողունակություններն ու յուրաքանչյուր մակարդակի համար նախատեսված ակնկալվող վերջնարդյունքները՝ ներկայացնում ենք հետևյալ դիտարկումներն ու աջառարկները՝

Դիտարկումներ

- Սույն փաստաթղթի և 2011թ-ին ՀՀ կառավարության կողմից ընդունված «Որակավորումների ազգային շրջանակ»-ի միջև առկա է անհամապատասխանություն: «Որակավորումների ազգային շրջանակ»-ում կրթության յուրաքանչյուր աստիճանի համար նշվում են գիտելիքներ, հմտություններ, կարողություններ. մինչդեռ չափորոշչի այս նախագծում օգտագործվում է միայն կարողունակություն արտահայտությունը։
- Նախագծում ներկայացված Առանցքային կոմպետենցիաների նկարագրության մեջ բացակայում են բաժանումներ/հստակեցումներ ըստ գիտելիքի, հմտության (կարողության), արժեքների (դիրքորոշումների) բաղադրիչների։ Կոմպետենցիաների հստակեցման նման մոտեցում է առկա ԵՄ համապատասխան փաստաթղթում (Key competences for lifelong learning, EU):
- Նախագծում բացակայում է Առանցքային կոմպետենցիաների և հանրակրթության յուրաքանչյուր մակարդակում ներկայացված ակնկալվող վերջնարդյունքների, ինչպես նաև ուսումնական բնագավառների միջև տրամաբանական կապը։
- Փաստաթղթում գիտելիք, հմտություններ, արժեքներ և դիրքորոշումներ հասկացությունները օգտագործված են 3 իմաստով։ Նախ, դրանք դիտարկվում են որպես կարողունակության բաղկացուցիչներ, ապա հանրակրթության բովանդակության բաղադրիչներ, իսկ երրորդ դեպքում էլ՝ որպես վերջնարդյունքներ գրելու բաղադրիչներ։

- Չափորոշչով սահմանվում են հանրակրթության բովանդակության հետևյալ բաղադրիչները՝ գիտելիք, հմտություն, դիրքորոշում, արժեքային բաղադրիչ: Վերջնարդյունքները գրված են գիտելիքների, հմտությունների, դիրքորոշումների լեզվով: Հասկանալի չէ, թե որոնք են այդ արժեքները և փաստաթղթի որ մասում են արտացոլվում:
- Նախագծում ներկայացված մի շարք վերջնարդյունքներ չափելի չեն, իսկ որոշներն ունեն ձևակերման խնդիր: Օրինակ, «տեղեկացված լինելը» չի կարող վերջնարդյունք լինել, այն էլ՝ չափելի: Կամ «նախնական պատկերացում» արտահայտությունը չի կարող դիտարկվել որպես ճանաչողական բայ:Վերջնարդյունքների սխալ ձևակերպումները դրանք դարձնում են անչափելի, ինչը ռիսկային է դարձնում հետագայում դրանց ստուգման, վավերացման գործընթացը:
- Ներկայացված ակնկալվող վերջնարդյունքները ձևավորված չեն կրթության յուրաքանչյուր մակարդակի համար հաջորդականության և զարգացման սկզբունքների հիման վրա և նրանց միջև կապ չի հաստատվում: Օրինակ՝ տարրական դպրոցի համար գրված է այսպիսի վերջնարդյունք. «գտնի իր սխալները և ձգտի դրանք ուղղել ինքնուրույն կամ աջակցությամբ»: Այս վերջնարդյունքը շարունակություն չի ստանում միջին և ավագ դպրոցում: Արդյո՞ք սխալ գտնելը և շտկելը միայն տարրական դպրոցում է կարևոր:
- Բացակայում է վերջնարդյունքների դասակարգումը:Այսինքն, չի ամրագրվում այն, որ կան վերջնարդյունքներ, որոնք բոլոր աստիճաններում պետք է կարևորվեն և սպիրալի սկզբունքով զարգանան,իսկ կան նաև յուրաքանչյուր աստիճանին բնորոշ վերջնարդյունքներ:
- Նախագծում բացակայում են կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցման ներդրման հայեցակարգային կարևոր բաղադրիչներ, օր,՝ Դասավանդման սկզբունքներ, Ուսուցչին ներկայացվող պահանջներ: Առանց այս բաղադրիչների, ուսուցիչների համար կարող է պարզ չլինել, թե ինչն է փոխվում իրենց աշխատանքում: Չափորոշչի գլխավոր նպատակը պետք է լինի ուսուցիչների համար հասկանալի դարձնել կոմպետենցիաների վրա հիմնված կրթության էությունը: Չափորոշչային փաստաթուղթ գրելիս պետք է հիմնվել հայտնի եռանկյան վրա՝ Վերջնարդյունք-Գնահատում-Դասավանդում: Վերջինս փաստաթղթում բացակայում է:
- Հաշվի առնելով ՀՀ-ում ուսուցիչների կարողությունների առկա մակարդակը՝ կարողունակությունների վրա հիմնված մոտեցման անցումը ռիսկային կարող է լինել, քանի որ ՀՀ ուսուցիչների կարողունակությունների շուրջ բազային գիտելիքները/հմտությունները և, ընդհանուր առմամբ, անհրաժեշտ կարողունակություններն ունեն զարգացման անհրաժեշտություն:

Առաջարկներ

- Ապահովել «Որակավորումների ազգային շրջանակ» փաստաթղթի և սույն փաստաթղում ներկայացված չափորոշչի համապատասխանելիությունը:
- Անհրաժեշտ է նախագծում օգտագործվող գիտելիք, հմտություններ, արժեքներ և դիրքորոշումներ հասկացությունների սահմանումները հստակեցնել, որպեսզի բացառել դրանց երկիմաստությունը:
- Վերախմբագրել Առանցքային կոմպետենցիաները՝ հստակեցնելով/բաժանելով դրանք յուրաքանչուրի համար գիտելիք, հմտություն, արժեք/դիրքորոշում բաղադրիչների:
- Վերջնարդյունքները բաժանել ըստ յուրաքանչյուր Առանցքային կոմպետենցիաների՝սահմանելով դրանք որպես կարողունակությունների բաղադրիչներ: Առաջարկում ենք փաստաթղթում ներառել հետևյալ մոդելային մոտեցումը՝

Առանցքային Կոմպետենցիա	Առանցքային կոմպետենցիաների բաղադրիչ-վերջնարդյունքներ		
	Տարրական	Հիմնական	Միջնակարգ
1.Լեզվական և գրագիտության	1.1		
	Յուրաքանչյուր մակարդակում համարակալված վերջնարդյունք, որից պարզ կլինի, թե դա որ Առանցքային կոմպետենցիային է տանելու:		

- Հատկացնել առանձին հատված արժեքներին: Փաստաթղթում դրանք նշվում են որպես կարողունակությունների մաս, կրթության բովանդակության բաղադրիչ: Բայց, ի վերջո, պարզ չէ, թե որ մասում են գրված այդ արժեքները:
- Վերախմբագրել ակնկալվող վերջարդյունքները և առանցքային կոմպետենցիաները՝ դրանց միջև ստեղծելով տրամաբանական և բովանդակային կապեր, ապահովել չափորոշիչ գրելու գլխավոր սկզբունքներից մեկը՝ հետևողականությունը:
- Դասակարգել վերջնարդյունքները՝ հստակեցնելով, թե որոնք են այն վերջնարդյունքները, որոնք բոլոր աստիճաններում պետք է կարևորվեն և սպիրալի սկզբունքով զարգանան, իսկ որոնք են բնորոշ միայն կրթական տվյալ աստիճանին:
- Յուրաքանչյուր վերջնարդյունք ձևակերպել այնպես,որ այն սխալ մեկնաբանման հիմք չդառնա:
- Սույն նախագծում վերջնարդյունքները սահմանելիս և դրանք առավել ընդհանրական հասկացություններով ներկայացնելիս դրանց առավել ամբողջական ցուցակն անպայմանորեն ներկայացնել առարկայական չափորոշիչների բաժնում:
- Լրամշակել նախագիծը՝ սահմանելով Կոմպետենցիաների վրա հիմնված կրթության կազմակերպման (պլանավորման,իրականացման, դասավանդման, գնահատման) սկզբունքներ, ինչպես նաև ներառել դպրոցին, ուսուցչին ներկայացվող պահանջներ:
- Մշակել Նախագծով սահանված գործողությունների ճանապարհային քարտեզ, որտեղ փուլային մոտեցմամբ կնկարագրվի, թե ինչպես է տեղի ունենալու անցումը կոմպետենցիաների վրա հիմնված կրթական համակարգին /կարողությունների զարգացում, գործիքակազմ, դասավանդում և այլն/: Եթե անհնար է սույն փաստաթղթում ներառել նման ճանապարհային քարտեզ, ապա առաջարկում ենք նշել, որ այս փաստաթղթի հիման վրա կմշակվի նախագծում ամրագրված գործողությունների իրականացման պլան:

2. Գնահատման փիլիսոփայության և պրակտիկաների փոփոխություն/ վերաիմաստավորում

Նախագծում նախատեսված է էականորեն փոխել ՀՀ հանրակրթության համակարգում գործող գնահատման գործընթացի փիլիսոփայությունը և պրակտիկաները: Մասնավորպես, նախատեսվում է «սովորողների միավորային գնահատումն իրականացնել սկսած 5-րդ դասարանի երկրորդ կիսամյակից՝ էապես կարևորելով ուսուցանող (ձևավորող) գնահատումը», «բացասական կամ անբավարար միավորային շեմից հրաժարվելը», «գնահատման քանակական (միավորային) և որակական (ուսուցանող) եղանակների մեջ որակական գնահատման տեսակարար կշռի զգալի մեծացում»:

Ուսումնասիրելով Նախագծով ներկայացված գնահատման գործընթացը՝ ներկայացնենք ներքոնշյալ դիտարկումներն ու առաջարկները:

Դիտարկումներ

- 1-5րդ դասարաններում միավորային գնահատման վերացման շուրջ առկա են որոշ վերապահումներ: Խնդրային է այն, որ միավորային գնահատում չի կիրառվելու մինչև 5-րդ դասարանի 2-րդ կիսամյակը: Ռիսկային է շուրջ 5 տարի բացառապես առաջնորդվել բնութագրման վրա հիմնված գնահատման մեխանիզմով, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ ուսուցչական կազմը դեռևս լիարժեք կերպով չի տիրապետում ձևավորող /formative գնահատման մեթոդներին և գործիքներին: Պետք է ի նկատի ունենալ նաև, որ 4-րդ դասարանը պարտադիր կրթության առաջին մակարդակի ավարտն է և եթե երեխայի գիտելիքներն այս փուլում ճիշտ և ամբողջական կերպող չգնահատվեն, ապա շատ մեծ է հավանականությունը, որ արդյունքում երեխան պարտադիր կրթության հաջորդ մակարդակ կանցնի ոչ լիարժեք գիտելիքներով և կարողություններով:
- Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ 4-րդ դասարանի աշակերտները մասնակցում են Մաթեմատիկայի եւ բնագիտության միջազգային միտումների (TIMSS) ստուգատեսին: Վերջինիս արդյունքները որևէ համեմատության մեջ հնարավոր չի լինի դնել, քանզի առաջարկվող Նախագծով երեխաները չեն ունենա որևէ՝ նախկինում հանձնած ստուգատեսի արդյունքնում ստացած միավորային նիշ: Դրա հետ մեկտեղ քանակական/միավորային գնահատման փորձառության բացակայությունը, կարող է հանգեցնել նույն TIMSS-ի ցածր արդյունքների:
- Տարրական դպրոցի թվային գնահատականների վերացման պարագայում խնդրային է դառնում այդ մակարդակի համար նախատեսված ակնկալվող վերջնարդյունքների չափման հավաստումը/գնահատումը:
- «Անբավարար» միավորային սանդղակից հրաժարվելու մոտեցումը կարող է էապես ռիսկային լինել, քանի որ նախագծով նկարագրված չէ, թե փոխարենը ինչ այլ մեխանիզմ՝ ցուցանիշ/ինդիկատոր է սահմանվելու, մշակվելու և ներկայացվելու, որով հնարավոր կլինի բացահայտել և գնահատել՝ արդյոք աշակերտը ձեռք է բերել այս կամ այն գիտելիքը/հմտությունը: Նման մեխանիզմի՝ ցուցանիշի/ինդիկատորի բացակայությունը խնդրային կարող է դառնալ երեխայի առաջադիմության ընդհանուր պատկերի հասկացման, ինչպես նաև սահմանային «վատ» իրավիճակի պարագայում արդյունավետ կանխարգելիչ մեխանիզմների կիրառման տեսանկյունից:
- Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ «անբավարար» գնահատականի վերացումը չի կանխելու աշակերտին արհեստական բարձր գնահատելու ավանդույթը, քանի որ դպրոցին ձեռնտու չի լինելու արտաքին գնահատման դեպքում ունենալ ցածր թվանշաններ:
- Իհարկե գնահատականը չպետք է լինի երեխայի սովորելու մոտիվացիա, սակայն ներկայիս կրթական համակարգում այն խաղում է շատ մեծ դեր: Եվ ներկայիս իրավիճակում անբավարար միավորային շեմից կտրուկ հրաժարվելը կարող է հանգեցնել երեխաների սովորելու մոտիվացիայի մակարդակի նվազեցմանը: Անհրաժեշտ է գնահատել անբավարար թվանշանի վերացման ազդեցությունը նաև այն աշակերտների վրա, որոնք ստանում են ցածր դրական թվանշաններ: Այդ աշակերտներն այսօր ջանքեր են գործադրում «անբավարար» թվանշան չստանալու համար: Եթե վերացվի «անբավարար» թվանշանը, ապա մեծ է ռիսկը, որ այս երեխաների սովորելու մոտիվացիան անկում կարձանագրի: Եթե «2»-ի, «3»-ի ու «4»-ի միջև տարբերություն չկա և չեն լինելու դրանից բխող բացասական հետևանքներ (Նախագծում դրանց մասին չի խոսվում), ապա ինչո՞ւ ջանք գործադրել: Դպրոցում

աշխատող ուսուցիչները կվկայեն, որ «անբավարար» թվանշան չստանալը մոտիվացնում է որոշ սովորողների ինչ-որ բան ձեռնարկելու:

- Գլխավոր հարցերից մեկն այն է, որ ուսումնական ծրագիրը տարեցտարի բարդանալու է: Հարց է առաջանում, թե ինչպես է 1-2 միավոր ստացած աշակերտը հաղթահարելու շարունակաբար բարդացող ծրագիրը, երբ չեն ներկայացվում այն երաշխիքները, որոնց համաձայն երեխաների գիտելիքի կարիքները կգնահատվեն ժամանակին և կձեռնարկվեն այդ կարիքներին համապատասխան լրացուցիչ քայլեր:
- Ձևավորող գնահատման գործընթացը մեթոդապես ավելի բարդ է ու ժամանակատար և ենթադրում է ուսուցիչների կողմից մեծ ջանքերի գործադրում ու բարձրակարգ հմտություններ: Դասարաններում աշակերտների առավելագույն թվաքանակի, ուսուցչի ծանրաբեռնվածության չնվազեցման պարագայում մեկ ուսուցչի համար խնդրային, որոշ դեպքերում՝ անհնար, կարող է լինել յուրաքանչյուր աշակերտի անհատական բնութագրերի ճիշտ գնահատումը և կազմումը: Ըստ էության, այստեղ չենք կարող խուսափել բնութագրերի կազմման արհեստականացված գործընթացից (copy-paste), երբ ուսուցիչները կրկնում են երեխաների բնութագրերը:Միևնույն ժամանակ, ձևավորող գնահատումը ժամանակատար է և պահանջելու է լրացուցիչ աշխատանք: Ըստ էության պարզ չէ նաև, թե որքանով է դա արտացոլվելու ուսուցիչների աշխատավարձի վրա:
- Հստակ չէ ձևավորող գնահատման գործընթացի գործիքակազմը՝ ուսուցիչների կարողությունների, հմտությունների ներկայիս ցածր մակարդակի պարագայում:

Առաջարկներ

- ՀՀ-ում առկա հանրակրթության ներկայիս իրավիճակում գնահատման համակարգի կտրուկ փոփոխություններն, առանց երկրում կրթության համար բարենպաստ միջավայրի, մարդկային ու ֆինանսական բավարար ռեսուրսների, կարող է հերթական անգամ հետ մղել մեր կրթական համակարգը, ինչպես եղավ առանձնացված ավագ դպրոցների ոչ հաշվենկատ ռեֆորմի դեպքում:Այդ իսկ պատճառով, որևէ փոփոխություն նախատեսելիս անհրաժեշտ է հաշվի առնել առաջարկվող փոփոխության վերաբերյալ միջազգային, համադրելի դրական փորձը և միայն տարբեր համայնքների մի քանի դպրոցներում դրանք փորձարկելուց և դրական արդյունք ստանալուց հետո մտածել այն ողջ հանրակրթական ոլորտում իրականացնելու մասին:
- Միավորային գնահատականներ չկիրառել 1-2-րդ դասարաններում: Անցումը պետք է արվի աստիճանական՝ տարրական դպրոցի դասագրքերը բարելավելուն և ուսուցիչների մասնագիտական կարողությունները հզորացնելուն զուգընթաց: Պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ 4-րդ դասարանում պետք է ամրագրվի պարտադիր կրթության առաջին մակարդակի կրթական ծրագրերի յուրացման փաստը, որը հնարավոր է անել միասնական՝ թե՛ ձևավորող, թե՛ միավորային փոխլրացնող գնահատման իրականացման արդյուքնում: Տարրական դպրոցում աստիճանական անցում կատարելով միավորային գնահատմանը (3-րդ դասարանից սկսած) և այն փոխլրացնելով ձևավորող գնահատումով՝ առավել կնպաստենք երեխայի գիտելիքների և կարողությունների ամբողջական գնահատմանը և առկա հնարավոր բացթողումների ժամանակին վերհանմանը և լրացմանը: Սրանով իսկ կլուծվի նաև տարրական դպրոցի համար նախատեսված ակնկալվող վերջնարդյունքների չափելիության հիմնահարցը:
- Միավորային գնահատումը մեկնարկելով 3-րդ դասարանից՝ առավել կօժանդակենք աշակերտների մոտ սույն մեխանիզմով գիտելիքի գնահատման փարձառությանը և հանրակրթության տարրական մակարդակի վերջում՝ աշակերտների գիտելիքի և

կարողությունների ամբողջական պատկերի առկայությանը, որը հնարավորություն կտա համեմատել արդյուքները միջազգային ստուգատեսների արդյուքների հետ և անել համապատասխան հետևություններ:

- Նախքան «անբավարար» միավորային սանդղակից հրաժարվելը, անհրաժեշտ է սահմանել, մշակել և ներկայացնել այնպիսի մեխանիզմ՝ ցուցանիշ/ինդիկատոր, որի առկայությունը կծառայի որպես ազդակ, որ տվյալ երեխան չունի իր կրթական տարիքին և կարիքներին համապատասխան գիտելիքներ և կարողություններ և որ անհրաժեշտ է անհապաղ կիրառել համապատասխան կանխարգելիչ քայլեր կրթական բացը լրացնելու համար:
- Անհրաժեշտ է հստակ սահմանել գնահատականի նշանակման չափանիշներ. այն անհրաժեշտ գիտելիքների և կարողությունների ծավալը, որը թույլ կտա ուսուցչին հստակ հասկանալ,թե տվյալ ծավալի դեպքում ինչ գնահատական դնել, ինչը կնվազեցնի սուբյեկտիվ, կամայական գնահատման հավանականությունը:
- Նախագծով առաջարկվող ձևավորող գնահատման գործընթացը հնարավոր չի լինի արդյունավետ կերպով իրականացնել, եթե դասարաններում աշակերտների առավելագույն թվաքանակը մնա նույնը: Առաջարկվում է նվազեցնել ներկայումս գործող դասարաններում աշակերտների առավելագույն թիվը և ուսուցիչների ու մանկավարժական այլ աշխատողների համար կազմակերպել կարողունակությունների շուրջ վերապատրաստման դասընթացների շարք: Հասկանալով, որ մի քանի օր տևող վերապատրաստման դասընթացները բավարար չեն ձեռք բերված գիտելիքներն ու հմտություններն արդյունավետ կիրառելու համար, առաջարկում ենք, որ ԿԳՄՍ նախարարությունը նախագծում ներկայացված կրթական ծրագրերն իրականացնելու սկզբնական փուլում ուսուցիչներին տրամադրի անհրաժեշտ օժանդակություն՝ մենթորության, մասնագիտական խորհրդատվության և ինքնակրթմանն օժանդակող նյութերի տրամադրման եղանակով:
- Առաջարկում ենք իրականացնել կանոնավոր մշտադիտարկումներ՝ համոզվելու, որ վերապատրաստումն ու հավելյալ օժանդակությունը ծառայել են իրենց նպատակին:
- Առաջարկում ենք մշակել արտաքին գնահատման այնպիսի մեխանիզմ, որը հնարավորություն կտա առավելագույնս բացառել մարդու ներգրավվածությունը գնահատման գործընթացում, որի օգնությամբ ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը, Կրթության տեսչական մարմինը կամ որևէ այլ իրավասու կառույց կկարողանա օբյեկտիվորեն գնահատել, վերահսկել և ի վերջո գնահատման հետևանքով ստացված արդյուքների համեմատության շնորհիվ արձանագրել դպրոցում ուսուցիչների կողմից իրականացված գնահատման գործընթացների կազմակերպման անաչառությունը, որակն ու համապատասխանելիությունը իրականացման ամրագրված նորմերին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն նախագծի համաձայն ձևավորող (ուսուցանող) գնահատման մեթոդներն ու ձևաչափն ընտրում է հանրակրթական ուսումնական հաստատությունը, էլ ավելի է մեծանում ԿԳՄՍ նախարարության դերը դպրոցներում գնահատման գործընթացի որակի ապահովման մեխանիզմների և դրանց կիրառման երաշխավորման հարցում:

3. Մարդու իրավունքների և ժողովրդավարական սկզբունքների արժևորում

Դիտարկումներ

- Կարողունակություններից երկուսը՝ ինքնաճանաչողական և սոցիալական, ժողովրդավարական և քաղաքացիականն ուղղակիորեն առնչվում են մարդու իրավունքներին և ժողովրդավարությանը: Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակության ձևավորումը ենթադրում է համապարփակ կրթություն մարդու իրավունքների, հավասարության, հանդուրժողականության, քաղաքացու և անհատի դերի, մարդու արժանապատվության, Սահմանադրական կարգի, պետական կառավարման և ենթակառուցվածքների վերաբերյալ: Սակայն ներկայացված նախագծում սույն կարողունակությունների ձևավորումը նախատեսվում է իրականացնել միայն 7-12-րդ դասարաններում՝ առանձին առարկայով: Չնայած նրան, որ սույն նախագծով Հասարակական գիտությունների ուսուցումը սկսվում է 7-րդ դասարանից (նախկին 8-րդի փոխարեն), ինչը հնարավորություն կտա ավելի վաղ ուսումնասիրել մարդու իրավունքների և ժողովրդավարության թեմաները, այնուամենայնիվ, հանրակրթության տարրական ծրագրում հստակ չի ներկայացվում, թե, հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները, ինչպես և ինչ առարկայի շրջանակներում են ձևավորվելու վերոնշյալ կարողունակությունները:
- Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակությունը սահմանում է, որ «Սովորողները նպաստում են ժողովրդավարության, ազատության, սոցիալական արդարության և օրենքի գերակայության վրա հենվող հասարակության զարգացմանը»: Սույն ձևակերպումը չի պարզաբանում, թե ինչ կառողունակության ձեռքբերման արդյունքում է սովորողը նպաստելու ժողովրդավարության, ազատության, սոցիալական արդարության և օրենքի գերակայության վրա հենվող հասարակության զարգացմանը:
- Հանդուրժողականությունը ձևակերպած է միայն հիմնական ծրագրի շրջանավարտին ներկայացվող ակնկալվող վերջնարդյունքներում՝ «ցուցաբերի հանդուրժողականություն, ապրումակցում և մարդասիրություն»: Արդյո՞ք մյուս ծրագրերում ևս չպետք է ներառել հանդուրժողականությունը որպես վերջնարդյունք:
- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սովորողների՝ որպես քաղաքացի ձևավորումը, սովորողների շրջանում անհատի ինքնության նկատմամբ հարգանքի ձևավորումը, հավասարության մշակույթի սերմանումը նախ և առաջ նախատեսված է որպես «հասարակություն և հասարակական գիտություններ» ուսումնական բնագավառին վերաբերող առարկաների շրջանակներում տրված ուսուցման արդյունք, կարծում ենք դասաժամերի տոկոսային նվազագույն միավորի տրամադրումը նշված ուսումնական բնագավառին վերաբերող առարկաների դասավանդմանն արդարացված չէ:
- Նախագծի ընդհանուր դրույթների բաժնում սահմանվում է, որ «Չափորոշիչը նպատակաուղղված է հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթության քաղաքականության ապահովմանը», սակայն դրանից բացի որևէ կերպ անդրադարձ չկա կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին կամ ներառականությանն ընդհանրապես: Ներառակության ապահովումը պետք է ենթադրի մեթոդների բազմազանություն, սովորելու այլընտրանքային միջոցների հասանելիություն, որոնք որևէ կերպ նշված չեն:
  Նախագծի ընդհանրական վերջնարդյունքների ձևակերպումներով հնարավոր չէ գնահատել վերոնշյալ արժեքների ուսուցանման ընդանուր մոտեցումը, քանի որ

հաճախ որոշ արժեքներ չեն նկարագրված համապատասխան տերմինով, սակայն այլ բառերով/ձևակերպումներով կարող են հանդես գալ:

- «Հանրակրթական հիմնական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները» հատվածում նշված է, որ «աշակերտը վերլուծի և ընկալի տարբեր բնույթի գրական հայերեն տեքստեր և հասկանա դրանց հիմնական գաղափարը (ազգային փոքրամասնությունների դպրոցների պարագայում կարող է նաև իր մայրենի լեզվով)»: Նշված կետում ազգային փոքրամասնությունների վերաբերյալ հատվածը գործուն չէ, քանի որ ազգային փոքրամասնությունների համայնքների մեծ մասի դեպքերում չկան վերջիններիս լեզվով դասավանդվող դպրոցներ:Նշված հատվածում ասվում է նաև, որ աշակերտը պիտի «ճանաչի և արժևորի իր ազգային մշակույթը, նյութական և ոչ նյութական ժառանգությունը, դրա առանձնահատկությունները և ներդրումը համաշխարհային մշակույթի մեջ», սակայն չի հստակեցվում, թե արդյոք պետք է ազգային փոքրամասնությունների պարագայում մեխանիզմներ ստեղծվեն հենց իրենց մշակույթի պահպանության համար, թե՞ սույն պահանջը ազգային փոքրամասնությունների դեպքում նույնպես վերաբերվում է հայկական մշակույթի ճանաչմանը:

Առաջարկներ

- Միջնակարգ կրթության չափարոշիչներում ժողովրդավարության սկզբունքների սերմանման, քաղաքացիական հասարակության ձևավորման համար անհրաժեշտ կարողունակությունների ձևավորման ամրագրումը կարևոր քայլ է հանրակրթական հաստատություններում ժամանակի պահանջներին համահունչ՝ այլակարծությունն ու բազմազանությունն ընկալող և ընդունող հասարակության կրթման համար: Ինքնաճանաչման և ինքնակազմակերպման կարողությունների զանրգացումը՝ որպես հանրակրթության գործառույթ, կարող է նպաստել ոչ միայն միմյանց հանդեպ հարգանքի և հանդուրժողականության, այլ նաև սեփական հատկանիշներն ընդունելու, ինքնազարգացման և արժանապատիվ ապրելաձևի ձևավորմանը:
  Կարևոր է նաև մարդկային քաղաքակրթությունների մշակույթների վերաբերյալ տեղեկացվածության բարձրացումը, ինչը հնարավորություն կտա սովորողներին լինել տեղեկացված և ընդունող՝ բազմազանության նկատմամբ: Ելնելով այս ամենից առաջարկվում է էապես ավելացնել «հասարակություն և հասարակական գիտություններ» ուսումնական բնագավառին վերաբերող առարկաների շրջանակներում տրված դասաժամերի քանակը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ սովորողների՝ որպես քաղաքացու ձևավորումը, սովորողների շրջանում անհատի ինքնության նկատմամբ հարգանքի ձևավորումը, հավասարության մշակույթի սերմանումը նախ և առաջ նախատեսված է որպես այդ ուսումնական բնագավառին վերաբերող առարկաների շրջանակներում տրված ուսուցման արդյունք:
- Աջարկում ենք ամրագրել, թե ինչպես է ինքնաճանաչողական և սոցիալական, ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակությունների զարգացման գործընթացն իրականացվելու հանրակրթական տարրական ծրագրի շրջանակներում: Առաջարկում են հստակեցնել,թե որ առարկաների շրջանակներում են ուսուցանվելու տարիքին համապատասխան սույն կարողունակությունների հիմքում ընկած արժեքները:
- Առաջակվում է “Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակության” սահմանման մեջ առաջին հերթին ամրագրել, որ սովորողները ճանաչեն և ընդունեն ժողովրդավարության, ազատության, արդարության, հավասարության, հանդուրժողականության սկզբունքները և առաջնորդվեն դրանցով, որով իսկ կնպաստեն ժողովրդավարության, ազատության, սոցիալական արդարության և

օրենքի գերակայության վրա հենվող հասարակության զարգացմանը: Առավելապես պետք է շեշտադրում կատարել, որ մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը, տարբեր կրոնական, էթնիկական կամ այլ խմբերի արժեհամակարգերի միջև տարբերությունների ընկալումը, գնահատումը, և դրանց նկատմամբ հարգանքը կառուցողական և համերաշխ համակեցության հիմք են:

- Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն բաժնում ճիշտ է կիրառել «իրավունքի գերակայություն» եզրույթը, ինչը բխում է իրավական պետության էությունից. նույն միտքը չի արտացոլում «օրենքի գերակայություն» եզրույթը:
- Հաշվի առնելով, որ ՀՀ Սահմանադրության համաձայն Հայաստանում բարձրագույն արժեք է մարդը՝ անհատը, առաջարկում ենք մշակութային կարողունակությունը նախատեսող պարբերության երկրորդ նախադասության «ընտանիքի» բառից առաջ ավելացնել «անհատի» բառը:
- Կարևորելով մշակութային տարբերություններն ընդունելու և դրանց հետ հաշտ ապրելու կարողությունների զարգացումը՝ առաջարկում ենք մշակութային կարողունակության բաժնում կատարել լրացում՝ ավելացնելով «Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների մշակույթների վերաբերյալ տեղեկացվածության ու դրանց նկատմամբ հարգանքի՝ որպես համակեցության հիմք» արտահայտությունը:
- Առաջարկում ենք հայրենագիտության առարկայում ավելացնել նաև Հայաստանում ազգային փոքրամասնությունների պատմության, մշակույթի, կրոնների մասին հատվածներ:
- Լեզվական կարողունակության հատվածում առաջարկվում է ընդգծել, որ ազգային փոքրամասնություններն ունեն պայմաններ լիարժեք կերպով իրացնելու իրենց լեզվի իրավունքը:
- «Հանրակրթական հիմնական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներ» բաժնի ազգային փոքրամասնությունների վերաբերյալ հատվածի առնչությամբ առաջարկում ենք, որ դիտարկումներում նշված հատվածում առանձնացվի, որ ազգային փոքրամասնությունների պարագայում պահանջները վերաբերվում են հենց/նաև իրենց ազգային ինքնությանն ու մշակույթին: Խոսելով սովորողների շրջանում հայ և համաշխարհային մշակույթի ճանաչման կարողունակության մասին՝ կարևոր է ընդգծել, որ նման փաստաթղթերում պետք է հաշվի առնել երկրում ազգային փոքրամասնությունների առկայությունը և կարողությունների շարքում որպես լրացում ավելացնել երկրում ապրող ազգային փոքրամասնությունների մշակույթի ճանաչումը, ինչը մի կողմից կհանդիսանա ազգային փոքրամասնությունների համար ինքնության պահպանման երաշխիք, մյուս կողմից՝ կնպաստի բազմամշակութային հասարակության կայացմանը:
- Նախագծում անհրաժեշտ է ամրագրել, թե սույն չափորոշիչների կիրառումն ինչպես է նպաստելու համընդհանուր ներառականության կայացմանն ու որակյալ ներառական կրթության ապահովմանը: Առաջարկում ենք սահմանել, թե ինչ միջոցներ են ձեռնարկվելու ֆիզիկական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց համար կրթության հասանելիությունը հանրակրթության չափորոշիչներին համապատասխան հավասարապես ապահովելու ուղղությամբ:
- Նախատեսված առարկայական չափորոշիչների նկարագրության մեջ ևս հստակեցնել վերոնշյալ արժեքների բաղադրիչը յուրաքանչյուր առարկայի համար:
- Ներկայացնել այն մեխանիզմները, որոնցով երաշխավորվելու է վերոնշյալի իրականացումը:

Ընդհանուր դիտարկումներ և առաջարկներ նախագծում ամրագրված մյուս կարողունակությունների վերաբերյալ

- Կարողունակությունների 4-րդ կետում «սովորել սովորելու կարողունակության» վերաբերյալ պարբերության մեջ նշվում է, որ «սովորողներն ինքնուրույն և մյուսների հետ համատեղ արդյունավետ սովորում և աշխատում են կյանքի տարբեր իրավիճակներում»: Այս կարողունակության բովանդակությունը հասկանալի է, նպատակը և դրա կարևորությունը՝ նույնպես: Այնուամենայնիվ, հատկապես միջին դպրոցի վերջին դասարաններում և ավագ դպրոցում ակնհայտ է դառնում այն խնդիրը, որ աղջիկները և տղաները բացարձակ տարբեր փորձառություններ են ունենում և կարծես տարբեր իրողություններում են դաստիարակվում թե դպրոցում, թե դպրոցից դուրս: Դպրոցի ներսում տարբերակումներ են նկատվում ուսուցիչների կողմից, իսկ դպրոցից դուրս՝ ընտանիքի և արտաքին աշխարհի սպասելիքների հիման վրա տարբերակումներն են, որոնք նաև կախված են այդ տարիքային խմբի աղջիկների և տղաների վարքի և ձգտումների վերաբերյալ ընդհանուր հասարակական սպասելիքներից: Արդյո՞ք չափորոշիչը (կամ չափորոշչի կոնկրետ կետը) հաշվի է առնում կամ կարող է հաշվի առնել այն, որ թե դպրոցում կամ դպրոցից դուրս ուսուցիչները ևս ունեն իրենց ուրույն արժեհամակարգերը, որն ուղղակի կամ անուղղակի կերպով փոխանցում են (երբեմն նաև պարտադրում են) տարբեր աղջիկ և տղան աշակերտների: Այս առումով անպայման պետք է հաշվի առնել դպրոցական կոլեկտիվների և հատկապես հեղինակություն ունեցող ուսուցիչների արժեհամակարգերի ազդեցությունը աշակերտի վրա, հատկապես այն դեպքերում, երբ վերջինս կարող է չհամապատասխանել հավասարության, հակախտրականության և արդարության սկզբունքներին:
- Չնայած նախագծում ներառված են դրույթներ հավասարության, խտրականաության բացառման վերաբերյալ, այնուամենայնիվ, վտանգ կա, որ դրա կիրառումը կարող է անհաջողության մատնվել,եթե, օրինակ, ուսուցիչը չհետևի դպրոցական ծրագրերում ներառված չափորոշիչներին, քանի որ դրանք չեն համապատասխանում իր արժեհամակարգին՝ կապված գենդերային հավասարության, խտրականության և նմանատիպ այլ հարցերի հետ: Այս առումով նաև անհրաժեշտ է վերանայել ուսուցչի մասնագիտական չափորոշիչները:
- Առարկաների բովանդակության բաժնում անհրաժեշտ է ավելացնել ևս մեկ կետ, որի համաձայն, նոր առարկայական ծրագրերը ոչ թե ուղղակի պետք է հիմնված լինեն հին նկարագրությունների վրա, այլ դրանց վրա հիմնվելով՝ լինեն ավելի գենդերազգայուն (տեքստերի կառուցումը, ցուցադրվող պատկերները և այլն) ինչը խոսում է չափորոշչի՝ այլ փաստաթղթերի որակի և զգայունության հետ ուղղակի կապի մասին:
- Վտանգ կա, որ այն դեպքում, երբ «ձևավորող (ուսուցանող) գնահատման մեթոդներն ու ձևաչափն ընտրում է հանրակրթական ուսումնական հաստատությունը» առավել կսահմանափակվի գնահատման գործընթացների գենդերազգայունությունը: Արդյո՞ք սկզբնական շրջանից հնարավոր է հիմնվել ուսուցչական կազմերի զգայունության վրա՝ հաշվի առնելով արդեն իսկ տարբեր ուսումնասիրություններով դուրս բերված կարծրատիպերի տարածվածությունը վերջիններիս շրջանում: